



84. ԱՂՔԱՏՆ ՈՒ ՁՈՒԿ ԲՈՒՆՈՂԸ

Մի մարդ շատ աղքատ ա ըլել:

Մի օր սա վեր ա կենրմ դնրմ աշխատանք գտնի, մեկ էլ մի մարդ ա պատահրմ, ասրմ ա.— էդ ո՞ւր ես գնրմ:

Ասրմ ա.— Աղքատ մարդ եմ, գնրմ եմ մի գործ ճարեմ:

Ասրմ ա.— Արի ինձ հետ գնանք ձուկը բռնենք:

էս աղքատը դրա հետ գնրմ ա ձուկն են բռնրմ, էդ ըիգու բոլ ձուկ ա բերրմ տուն, ըիխեքը լավ ուտրմ են:

էքսի օրը ըլետ գնրմ ա ձկնորսի կուշտը, իրար հետ գնրմ են ձուկ բռնելու:

Ձկնորսն ասրմ ա.— էրեգ տեսա՞ր ես վենց թողը գցի:

Ասրմ ա.— Հա:

Ասրմ ա.— Դե առ էսօր էլ դու գցի, էսօր էլ քու հերթն ա, մի օր դու գցի, մի օր ես:

էս աղքատը թողը գցրմ ա թե չէ, մի մեծ ձուկն ա բռնրմ:

էս աղքատը էլետ ձկանը գցրմ ա շուրը:

էն ձկնորս տենրմ ա, ասրմ ա.— էն խի՞ էն ձկանը բրախեցիր, ես քեզ բերել եմ ձուկ բռնես, թե ձկնորսի հետ խաղ անես, դե ցնա կորի:

էս մարդը ըտեղից գնրմ ա ուրիշ տեղ, վեր ըլեդ գործ գտնի, ճմիին մի ուշաբ մի կով աղաքն արած գալիս ա. ու սրա աղաքին կաղնրմ: էս մարդին ասրմ ա.— էս վերդի՞ ես գնրմ:

Ասրմ ա.— Աղքատ մարդ եմ, հինգ-վեց քոռփա ընկա ունեմ, մի զատ շիկա ուտեն, դնրմ եմ մի գործ ճարեմ, աշխատեմ, ընխանցս մի հանգով պահեմ:

Ուշաբը ասրմ ա.— Էս կովը օրեկան մի վեճ կովկիթ լիքը կաթն ա տալի, առ տամ, կթի թող ընխեքը ուտեն մըչև մի տարի: Տարին թմամի ես կգամ քեզ հարց կտամ, թե պատասխանը տվիր, էդա կովը կթողեմ քեզ, թե չէ՝ քեզ ուտիլ տեմ:

Էս մարդը ընգնըմ ա մտկի մեջ. «Տանեմ, թե շաանեմ»: Մեկ էլ ասրմ ա. «Ջահնդամը, հլա մի տարի ընխեքս լավ կապրեն մըչև տարին թմամիլը կամ կովը կսատկի, կամ կովատերը»:

Կովը բերըմ ա տուն, ընխեքը ուրախանըմ են, կովի ճակատը պաշըմ են, խոտ են քաղըմ, բերըմ դնըմ կովի աղաքին:

Մարդը կնգանը ասրմ ա.— Ախլի՛, արի կովը կթի:

Կնիկը մի պղինձ ա բերըմ, կթըմ, պղինձը լցվըմ ա, համա կաթը գետի պես գալիս ա, մարդը տանըմ ա դրդակըմ, բերըմ կթըմ են, էլի ա լցվըմ, սրանք մնըմ են զարմացած, իրեք հետ պղինձը լցնըմ են:

Էս կովը օրեկան իրեք պղինձ կաթն ա տալի: Սրա ընխեքը բուլ-բուլ կաթը, մածունը, կարագը ուտըմ են, մի ղոլիցն էլ ծախում են:

Թե տարին վենց ա անց կենըմ, սհանք էլ շեն կլիսի ըլըմ, թե վենց տարին անց հացափ:

Տարին թմամում ա, էս մարդը կնգանը ասրմ ա.— Ա՛ կնիկ սըհե-սըհե բան ա ըլել, ըսօր Ուշաբը գալ տի:

Իրանք էդ օրը բուրբն էլ սգի մեջ են ըլում: Ըրիգոնը մի դոնախ ա գալի դրանց տուն, ասրմ ա.— Մի տեղ կտա՞ք ինձ էս քշեր:

Ասրմ են.— Ախպեր շան, սըհե-սըհե բան ա պտահել, ըսօր Ուշաբը գալ տի մեզ կուլ տա, դու խի մեզ հետ անտեղի գնաս կորչես, գնա ուրիշ տեղ գտի, ընդի կաց:

Էս մարդը ասրմ ա.— Բան չի կա, ինձ դուան տակին մի տեղ տվեք, ես նրա հարցերին կպատասխանեմ:

Էս մարդին բերըմ են ներս, հաց բան են ուտըմ, քնելու վախտը ասրմ ա.— Իմ տեղը դուան տակին գցեցեք:

Ասրմ են.— Չէ՛, ախպեր շան, դոնախ մարդ ես, խի ենք քու տեղը դուան տակին գցըմ:

Ասրմ ա.— Չէ, դուան տակին գցեցեք, վեր Ուշաբը հարց տա թե չէ, ես շուտ լսեմ, ձեռաց պատասխանեմ:

Սրա տեղը դուան տակին գցըմ են, ըտի էլ քնըմ ա, գշերվա մի վախտը Ուշաբը գալիս ա դուռը թակըմ ա:

Ղոնախը ասում ա.— էդ ո՞վ ես:
 Ասում ա.— Ուշարն եմ, եկել եմ:
 Սա ասում ա.— Ծս էլ եմ եկել:
 Ուշարը ասում ա.— Դու ո՞րտեղից ես եկել:
 Ղոնախը ասում ա.— Օխտը ծովի էն կողմիցն եմ եկել:
 Ուշարը ասում ա.— Հալբաթ ծովը պուճուր էր:
 Ասում ա.— Ի՞նչ պուճուր, տնաքանդ, արծիվը մի ամսըմը
 անշախ մի ծերից մի ծերը կթռչի:
 Ասում ա.— Բալթի էդ արծիվը պուճուր էր ըլել:
 Ասում ա.— Ա՛ տնաքանդ, ի՞նչ պուճուր, ամեն մի թեկը մի
 քաղաք կծածկի:
 Ասում ա.— Բալի քաղաքն ա պուճուր ըլել:
 Ասում ա.— Չէ՛, տնաշեն, մի լավ, քու հավան կացած ձին մի
 ամսըմը անշախ էդ քաղաքի շորս կուռը պտիտ դա:
 Ասում ա.— Բալի ձին քուռակ ա ըլել:
 Ասում ա.— Չէ՛, ի՞նչ քուռակ, նրա կաշին, որ քերթեն, օխտ
 հարիւր տղամարդի վերարկու կլեր:
 Ասում ա.— Բալի էդ մարդիկ բեխեք են ըլել:
 Ասում ա.— Չէ՛, ի՞նչ բեխեք, աքլորը վետերի տակին կան-
 չըմ ա, իրանք իմանում չեն:
 Ասում ա.— Բալի էդ մարդիկ քառ են ըլել:
 Ասում ա.— Չէ՛, ի՞նչ քառ, պախրեն քոլըմը փոքրտըմ ա նրանք
 ձենը մանրմ են:
 Ուշարը էլ կարում չի բան ասի, տեսնմ ա կոտորը ընդավ, թող-
 նում ա գնում, կովը մնում ա աղքատին:
 Լիսանում ա թե չէ, սա ասում ա.— Դե մնացեք բարի, ես
 գնացի:
 Ասում ա.— Ախպեր, դու ով ես, ասա, վեր մենք էլ քու լավու-
 թենի փոխը եդ տանք:
 Ասում ա.— Ծս էն ձուկն եմ, վեր բռնեցիր, ըլետ ջուրը գցեցիր:
 Դրա մհար էլ ասել են լավութին արա գցի ծովը, թե ծովը մանա
 վեչ, ձուկը հո կմանա:

